

Գործնական խորհուրդներ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻՆ

Չլսող կամ լսողության խանգարումներ ունեցող երեխաները, ինչպես բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց՝ նշանակում է **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին:**

Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրավերն ընդունելու պատրաստակամության համար:



1 ԴԱՍԱՐԱՆ

Առջևում և կենտրոնում: Վստահ եղեք, որ լսողության խանգարում ունեցող երեխան առջևում է նստած՝ մոտ հրահանգներին և FM համակարգին, և դասարանի այն մասում, որտեղից նա կարող է տեսնել Ձեզ, գրատախտակը և դասընկերներին:

2 ՁԵՐ ԴԵՄՔԸ ՏԵՍՆԵԼԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ՆՐԱՆՔ ԼՍՈՒՄ ԵՆ

Լսողության խանգարումներ ունեցող շատ երեխաներ կարողանում են կարդալ շրթունքներից: Նրանք հասկանում են խոսքը՝ դիտարկելով խոսողի շրթունքների շարժումները, դեմքի արտահայտությունները և ժեստերը: Խոսելիս միշտ դեմքով կանգնեք դեպի դասարանը, կրեք վառ գույնի շրթեր, խոսեք դանդաղ և հստակ՝ շեշտադրելով բառերի վերջավորությունները:

3 ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ԴԱՍԻՆ

Նախապես սովորողի ծնողին կամ հատուկ մանկավարժին տրամադրեք բառերի և տերմինների այն ցանկը, որոնք նա դեռ չի լսել և որոնց հետ նա պետք է ծանոթանա հաջորդ դասի ընթացքում: Անծանոթ բառերը ավելի վաղ ներկայացնելով սովորողին՝ Դուք կարող եք նվազագույնի հասցնել այդ բառերը ընկալելու նրա դժվարությունը: Հակառակ պարագայում նոր նյութ բացատրելիս նոր բառերը ուղեկցեք սովորողին ծանոթ հոմանիշներով կամ նկարներով:

4 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿ

15-20 րոպեն մեկ տրված ընդմիջումներն իսկապես կօգնեն լսողության խանգարումներ ունեցող երեխային պայքարել մտավոր հոգնածության հետ: Այդ հոգնածությունը պայմանավորված է ամբողջ օրվա ընթացքում լսողական սարքի միջոցով լսելու հետ:

5 ԱՆԱՂՄՈՒԿ ՄԻՋԱՎԱՅՐ

Լսողության խանգարում ունեցող սովորողները դժվարանում են կենտրոնանալ, երբ առկա է ֆոնային աղմուկ: Դասարանի դռները կամ պատուհանները փակելը պարզ և արդյունավետ միջոց է այդ աղմուկը նվազագույնի հասցնելու համար: Հիշեք՝ սովորողները, ովքեր օգտագործում են լսողական օժանդակ տեխնոլոգիա, չեն լսում այնպես, ինչպես իրենց հասակակիցները: Ուսումնական նյութը նրանց համար կդառնա հասանելի, եթե դասարանում առկա ավելորդ աղմուկը հասցվի նվազագույնի:

6 ՏԵՍՈՂԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ

Փորձեք հնարավորինս շատ օգտագործել նկարներ, գրաֆիկական պատկերներ և տեքստային նշումներ: Նոր նյութ բացատրելիս հնարավորինս շատ օգտագործեք գրատախտակ և դիդակտիկ պարագաներ: Դասարանին տրվող առաջադրանքները ներկայացրեք գրավոր տեսքով, իսկ բանավոր տեղեկատվությունը համալրեք նկարներով, գծապատկերներով, սխեմաներով: Ուսումնական նյութն ամրապնդելու նպատակով կարող եք կազմակերպել տեսաֆիլմի դիտում:

7 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար: